ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՍԽՀ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՀԱՏՎԱԾՈՒՄ 1921-1922 ԹԹ.

ՀԱԿՈԲՅԱՆ Մ. Տ.

Ադրբեջանում, ապա Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո հայ-ադրբեջանական հարաբերությունները սահմանային խնդիրների առումով այդպես էլ չբարելավվեցին: Բացի Լեռնային Ղարաբաղի, Նախիջևանի և Զանգեզուրի հիմնահարցերից, հայ-ադրբեջանական հարաբերություններում 1920-1922 թթ. առկա էին նաև սահմանային խնդիրներ՝ ջրային ռեսուրսների, արոտավայրերի և անտառից օգտվելու առնչությամբ, որոնց ուսումնասիրությունը, կարծում ենք, ներկայումս կարևոր նշանակություն ունի: Այս հակասությունները երբեմն նաև արյունահեղ բնույթ էին կրում, քանզի կողմերը (հայ և ադրբեջանցի գյուղացիությունը) հաճախ անզիջում դիրքորոշում էին դրսևորում: Բոլշևիկները ստեղծված բարդ կացությունը բացատրում էին նախկին իշխանությունների վարած անարդյունավետ քաղաքականությամբ, սակայն պատճառը շատ ավելի խորքային էր: Ուշագրավ է, որ Կովկասի բոլշևիկ գործիչներից այս հարցին, թերևս, ամենաշատը անդրադարձել է Գ. Օրջոնիկիձեն՝ փորձելով հիմնախնդիրը բացատրել բոլշևիկյան գաղափարախոսության շրջանակներում: Հատկապես կարևորվում է 1922 թ. դեկտեմբերի 11-ին Բաքվում սովետների անդրկովկասյան 1-ին համագումարում Գ. Օրջոնիկիձեի կողմից հնչեցված բոլշևիկյան հետևյալ տեսակետը այս հարցի առնչությամբ. «Ծանոթանալով ադրբեջանցի գյուղացիների կյանքի հետ՝ մենք տեսնում ենք, որ Ադրբեջանի գյուղացիությունը ապրիլի վերջերին դուրս է գալիս իրենց բնակավայրերից, որտեղ չկա ջուր և խոտ, և իրենց անասուններով, ընտանիքով ու ամբողջ ունեցվածքով քոչում են հայկական լեռները և մնում այնտեղ մինչև օգոստոսի վերջը: Ադրբեջանի գյուղացիությունն առանց այդ արոտավայրերի գոյություն ունենալ չի կարող: Ես եղա Հայաստանն ու Ադրբեջանը սահմանազատող հանձնաժո-ղովներից մեկում, պարզվեց հետևյալը՝ Թովուզի և Ղազախի գավառների գյուղացիները գոյություն ունեցող սահմանի պատճառով մնացել էին առանց անտառի»[1]: Բոլշևիկյան վերոհիշյալ մոտեցումը, ըստ էության, ավելի շատ համընկնում էր ադրբեջանական ընկալման և դիրքորոշման հետ, քան հայկականի: Սակայն ըստ արխիվային նյութերի՝ ադրբեջանցիների կողմից ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում կատարվում էին լուրջ իրավախախտումներ:

Հայ-ադրբեջանական սահմանային հակասությունները հյուսիսարևելյան հատվածում սկսվեցին Հայաստանի խորհրդայնացումից անմիջապես հետո: 1921 թ. սկզբներից Խորհրդային Ադրբեջանի Ղազախի շրջանի ղեկավարությունը սկսեց խոչընդոտներ հարուցել ՀՍԽՀ Իջևանի և Շամշադինի շրջանների անասնապահների առջև: 1921 թ. փետրվարի 16-ին

[1] **Օրջոնիկիձե Գ. Կ.,** Ընտիր հոդվածներ և ճառեր, Ե., 1950, էջ 114:

Իջևանի շրջանի Հեղկոմի երկրագործական բաժանմունքի վարիչը գրում է Հայաստանի Հեղկոմի նախագահին. «Իջևանի շրջանի անասունները կերի պակասության պատճառով ոչնչանում և կոտորվում են: Այդ մասին արդեն հայտնել ենք Ձեզ փետրվարի 8-ի գրությամբ: Հայտնելով այդ մասին՝ խնդրում եմ շտապ կերպով միջնորդել Ադրբեջանի խորհրդային իշխանության առաջ՝ թույլ տալու անասուններին հովիտներում արածացնելու համար»[2]:

Առկա էր նաև անտառի օգտագործման խնդիրը: Հայտնի է, որ Ադրբեջանի հյուսիսարևմտյան շրջաններում անտառներ չկան, և տեղի ադրբեջանական իշխանությունների թողտվությամբ Իջևանի և Շամշադինի շրջաններին հարակից ադրբեջանական գյուղերի բնակիչները սկսեցին անխնա ոչնչացնել հայկական անտառը և փայտանյութը տեղափոխել Ադրբեջան: Խնդրի առնչությամբ Դիլիջանի շրջանային Հեղկոմի նախագահի զեկուցագրում նշված է. «Ադրբեջանի հարևանությամբ գտնվող հայկական Լալակենդ գյուղի մոտակայքի անտառն ապօրինաբար հատվում է թաթարների կողմից և տեղափոխվում Ադրբեջան: Անտառը ոչնչացնելու ժամանակ թաթարները զինված են, այդ իսկ պատճառով անտառապահները ունակ չեն լինում պաշտպանել անտառը: Տեղում ձերբակալված թաթարները հրաժարվում են հրապարակել իրենց ազգանունները արձանագրություն կազմելու համար: Չնայած որ բազմիցս դիմել ենք Ղազախի շրջանային իշխանություններին միջոցներ ձեռնարկելու անտառի ոչնչացումը կանխելու համար, սակայն ցայսօր ոչ մի քայլ այդ ուղղությամբ չի արվել»[3]: Ուշագրավն այն է, որ Խորհրդային Ադրբեջանի հողգործկոմիսարը պահանջում էր թույլ տալ Ադրբեջանի բնակչությանը օգտագործելու Իջևանի և Շամշադինի շրջանների անտառները՝ նշելով, որ ադրբեջանցիներն ունեն դրանք օգտագործելու բոլոր իրավունքները: Այդ կապակցությամբ ՀՍԽՀ հողգործկոմի տեղակալը 1921 թ. փետրվարի 25-ին Հեղկոմի նախագահ Ս. Կասյանին ուղղված տեղեկատվական զեկուցագրում պարզաբանում է. «Պատիվ ունեմ Ձեզ հայտնելու, որ նախկին Ելիզավետպոլի նահանգի Աղստաֆյան անտառ-տնտեսությունը 1918 թ. անցել է Հայաստանի Հանրապետությանը և մինչ այժմ գտնվում է մեր տնօրինության տակ»[4]:

Բացի անասնագողության և անտառի ապօրինի հատման խնդիրներից, ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում կարևորագույն հիմնահարց էր նաև Ադրբեջանի ազգաբնակչության զինված լինելու հանգամանքը, որը հաճախ հանգեցնում էր ադրբեջանցիների կողմից զենքի ապօրինի գործադրման, մարդասպանության և թալանի դեպքերի: 1921 թ. ապրիլի 9-ին Դիլիջանի շրջանային ռազմական կոմիսարը գրում է Ղազախի Հեղկոմի նախագահին. «Ակսիմբարայի կիրճի հարևանությամբ բնակվող հայ ազգաբնակչությունից բազմիցս բողոքներ եմ ստանում առ այն, որ տեղի մահմեդական ազգաբնակչությունը զինված է: Ես անձամբ եմ ականատես եղել մահմեդական բնակչության զինված լինելու փաստին: Վերջերս հայկական Բաղանիս գյուղի բնակիչներից մեկը թալանվել և

[2] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 27, թ. 50:
[3] Նույն տեղում, գ. 45, թ. 80:
[4] Նույն տեղում, ց. 1, գ. 39, թ. 6:

հրազենային վնասվածք է ստացել մահմեդականների կողմից, և զինվածության նմանատիպ չարաշահումների դեպքերը բազմաթիվ են: Նման դեպքերից խուսափելու համար խնդրում եմ արդեն երկրորդ անգամ շտապ միջոցներ ձեռնարկել Ձեր ենթակայության տակ գտնվող Ակսիմբարայի կիրճի մահմեդական գյուղացիական բնակչությանը զինաթափելու և քրեածին տարրերին զսպելու ուղղությամբ, թեկուզև ուժի գործադրման միջոցով: Ձեր կողմից կատարվելիք քայլերի մասին խնդրում եմ հեռագրել ինձ Կենտրոնին տեղեկացնելու համար»[5]: Այս գրությունը Ղազախի իշխանությունները որակեցին որպես մեղադրանք և պատասխանեցին «հակընդդեմ մեղադրանքով»՝ իբր հայկական շրջանների բնակչությունը ևս զինված է: Սակայն ՀՍԽՀ Հեղկոմին ուղղված ապրիլի 27-ի զեկուցագրում ՀՍԽՀ ռազմական գործերի կոմիսարը ամբողջովին հերքում է հայկական գյուղերում ապօրինի զենք-զինամթերքի շրջանառության վերաբերյալ ադրբեջանական կողմի հաղորդած տեղեկատվությունը[6]: Բաքվում Հայաստանի դիվանագիտական ներկայացուցիչ Աթաբեկովի միջոցով Ադրբեջանի Հեղկոմը տեղեկացվեց, որ Դիլիջանի, Իջևանի և Շամշադինի շրջանների հայ բնակչությունը զինաթափված է, ի տարբերություն Խորհրդային Ադրբեջանին պատկանող Ակսիմբարայի կիրճի մահմեդական բնակչության[7]: Սակայն Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը ամեն գնով փորձում էր հակադրվել և պնդել, որ սահմանային հատվածում ադրբեջանական ազգաբնակչությունը զինված չէ, ճիշտ հակառակը՝ զինված են հայերը: Սա սկզբունքային նշանակություն ուներ Ադրբեջանի Հեղկոմի համար, քանզի դեռևս 1920 թ. ամռանը Ադրբեջանի Հեղկոմը պնդում էր, թե սահմանային հատվածում հայերը զինված հարձակումներ են իրականացնում անզեն մահմեդական բնակչության վրա[8]: Հասկանալի է, որ Խորհրդային Ադրբեջանի համար չափազանց դժվար պետք է լիներ ընդունելու փաստը, որ սահմանամերձ հատվածում ադրբեջանցիների շրջանում առկա է զենք-զինամթերքի ապօրինի շրջանառություն:

Հայաստանի և մոսկովյան իշխանությունների ու Հարավային Կովկասում նրանց ներկայացուցիչների ուշադրությունը խնդրի բուն էությունից շեղելու նպատակով Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը Երևանից եկած գրություններին սկսեց պատասխանել մեղադրանքով՝ իբր սահմանամերձ շրջանում հայկական իշխանություններն են խոչընդոտներ ստեղծում հայ-ադրբեջանական սահմանային առևտրի և ադրբեջանցի քոչվորներին իրենց անասունների հետ լեռները բարձրանալու հարցում: Առկա խնդիրները ուսումնասիրելու և լուծում գտնելու համար 1921 թ. մայիսի 24-ին ՀԽՍՀ արտգործժողկոմ Ա. Մռավյանը առաջարկում է Ադրբեջանի արտգործժողկոմ Մ. Հուսեյնովին Դիլիջանում բանակցություններ սկսել[9]: Մռավյանը առաջարկում էր հետևյալ միջոցառումները. 1. Անհապաղ դադարեցնել ապօրինի ծառահատումը Հայաստանի

---

[5] Նույն տեղում, ց. 2, գ. 98, թ. 32:

[6] Տե՛ս նույն տեղում, թ. 36:

[7] Նույն տեղում:

[8] Տե՛ս **Мустафа-заде Р.**, ***Две республики. Азербайджано-российские отношения в 1918-1922 гг., М., 2006, с.149.***

[9] ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 45, թ. 19:

տարածքում: 2. Անհապաղ դադարեցնել ադրբեջանական զինված խմբերի հարձակումներն անզեն հայ բնակչության վրա: 3. Անհապաղ միջոցներ ձեռնարկել տեղի՝ Ղազախի շրջանային իշխանություններին ստիպելու դադարեցնել խտրականությունը սահմանը հատող հայերի նկատմամբ[10]: Դիլիջանյան բանակցություններից առաջ Իջևան-Ղազախ սահմանահատվածի անցման կետերը ադրբեջանական իշխանությունները ուղղակիորեն փակեցին: Եթե հաշվի առնենք այն փաստը, որ հարակից շրջանների ազգաբնակչության համար ցորենի ձեռքբերման միակ շուկան Ղազախի շուկան էր, ապա պարզ է դառնում, որ հայ բնակչության վիճակը դառնում էր օրհասական:

Մինչև բանակցությունները սկսվելը մայիսի 16-ին Ադրբեջանի Հեղկոմը դիմում է Ա. Մռավյանին՝ խնդրելով թույլ չտալ հայ բնակչության անցումը Իջևան-Ղազախ սահմանային հատված՝ խուսափելով անցանկալի հետևանքներից[11]: Այսպիսով, Ադրբեջանի ղեկավարությունը հարցի լուծման «լավագույն տարբերակը» ընտրել էր «տնտեսական սպառնալիքների» գործադրման քաղաքականությունը՝ հայ ազգաբնակչությանը փաստացիորեն մատնելով սովի: Այս մասին է վկայում մայիսի 19-ին Դիլիջանի Հեղկոմի նախագահ Աթաբեկովի գրությունը[12]: Նշենք, որ Երևանից Հուսեյնովին ուղղված հեռագրում նշվում էր, որ եթե անհապաղ միջոցներ չձեռնարկվեն, ապա հնարավոր է, որ սահմանային անախորժությունները վերածվեն եղբայրասպան ազգամիջյան բախումների[13]: Բաքվի լռության պատճառով հեռագրերը Երևանից հետևում էին մեկը մյուսին: Բաքվում լավ հասկանում էին, թե ինչ նշանակություն ունեն Ղազախի և Թովուզի շրջանների ցորենի շուկաները հայ բնակչության համար, և շարունակում էին «սովի սպառնալիքի» գործադրման քաղաքականությունը: Այսպիսով, օր առաջ բանակցություններ սկսելը հայկական կողմի համար կենսական նշանակություն ուներ:

Բանակցությունների ընթացքում ձեռք է բերվում պայմանավորվածություն այն մասին, որ սահմանային անցման կետերը պետք է բացվեն ապրանքափոխանակության համար: Բացի դրանից, ադրբեջանական կողմը պարտավորվում էր ցորենը հնձելուց անմիջապես հետո հայկական Թազաքենդ գյուղի բնակիչներին վերադարձնել բռնությամբ խլված վարելահողերը: Սակայն մայիսի 26-ի Հուսեյնովին ուղղված Մռավյանի գրությունը ապացուցում է, որ ադրբեջանական կողմը ոչ մի քայլ չէր արել սահմանային կետերը բացելու և ազատ առևտուրը ապահովելու հարցում. «Չեմ հասկանում, թե ինչո՞վ են պայմանավորված Ադրբեջանի Հեղկոմի գործողությունները, սակայն դրանք ցավալիորեն հարվածում են Դիլիջանի շրջանի բնակչությանը: Թաթարների անցումը արոտավայրեր և ազատ ապրանքափոխանակումը չապահովելուն ուղղված գործողությունները կարող են օգտագործվել սադրիչների կողմից ազգամիջյան բախումներ հրահրելու համար: Խնդրում եմ անհապաղ միջոցներ ձեռնարկել ազատ ապրանքափոխանակությունը ապահովելու և սահմանային

[10] Նույն տեղում, թ. 83:
[11] Նույն տեղում, ց. 1, գ. 8, թ. 14:
[12] Նույն տեղում, ց. 2, գ. 45, թ. 55:
[13] Նույն տեղում, գ. 98, թ. 40, տե՛ս նաև գ. 45, թ. 68:

հատվածում ազգաբնակչության կրքերը հանգստացնելու համար»[14]: Սակայն Բաքուն շարունակում էր պահպանել լռություն: 1921 թ. մայիսի 31-ին Մռավյանը հարցի կապակցությամբ ավելի խիստ տոնով Բաքվում ՀՍԽՀ դիվանագիտական ներկայացուցչության միջոցով նորից դիմում է Հուսեյնովին՝ գրության պատճենը ուղարկելով նաև Օրջոնիկիձեին[15]: Այս անգամ ևս Ադրբեջանի ղեկավարությունը պատասխանեց մեղադրանքով, թե իբր ադրբեջանցի քոչվորների մուտքը Հայաստանի արոտավայրեր արգելափակված է. նրանք Հայաստանում ենթարկվում են բռնությունների, և այդ պատճառով հայ-ադրբեջանական սահմանային անցակետերը փակված են հնարավոր բախումներից խուսափելու համար: Այդ կապակցությամբ Հայաստանի Հեղկոմը Դիլիջանի Հեղկոմից պահանջեց պարզաբանումներ: Հունիսի 29-ին Դիլիջանի Հեղկոմի նախագահը զեկուցում է. «Ձեր հեռագրին ի պատասխան հայտնում եմ, որ ադրբեջանցի քոչվորները հայկական իշխանությունների կողմից ոչ մի տեսակի խտրականության չեն ենթարկվում: Խնդրում եմ կոնկրետ դեպքեր մատնանշեք, եթե այդպիսիք առկա են»[16]: Սակայն ադրբեջանական կողմը շարունակեց հետագա սադրանքները:

Հունիսի 14-ին Ադրբեջանի արտգործժողկոմի խորհրդական Անդրեևը գրում է Ա. Մռավյանին. «Թովուզի գործադիր կոմիտեի նախագահը տեղեկացնում է, որ ադրբեջանցի քոչվորների համար նախատեսված արոտավայրերը կիսով չափ օգտագործվել են ցանքի համար: Քոչվորները տեղական իշխանությունների կողմից բռնության են ենթարկվում՝ և Հայաստանի կառավարությունը, չնայած բազմիցս մեզ ուղարկված հեռագրերի, ոչ մի քայլ չի անում քոչվորների վիճակը թեթևացնելու համար: Անցանկալի հետևանքներից խուսափելու համար խնդրում եմ անհապաղ միջոցներ ձեռնարկել քոչվորներին անհրաժեշտ արոտավայրերով ապահովելու համար»[17]: Սրան ի պատասխան՝ Հայաստանի արտգործժողկոմատը պատասխանում է. «Դիլիջանի Հեղկոմին հանձնարարված է ուսումնասիրել տեղական իշխանությունների վերաբերմունքը քոչվորների նկատմամբ և խտրականությունների փաստերի բացահայտման դեպքում անմիջապես վերացնել դրանք և այդ մասին զեկուցել Երևան»[18]: Այսպիսով, արխիվային նյութերը ապացուցում են, որ ՀՍԽՀ ղեկավարությունը և Հայաստանի հյուսիսարևելյան սահմանահատվածի իշխանություններն ամեն ինչ անում էին ադրբեջանցի քոչվորներին արոտավայրերով ապահովելու և տեղական բնակչության հետ հնարավոր բախումներից զերծ պահելու համար:

Ուշագրավ է, որ 1921 թ. մայիսին Դիլիջանում Ղազախի և Դիլիջանի շրջանների ղեկավարությունների միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում ձեռք բերված պայմանավորվածություններն այդպես էլ կյանքի չկոչվեցին: Սեպտեմբերի 13-ին Դիլիջանի Հեղկոմից ուղարկված զեկուցագրում նշվում էր, որ Հայաստանի և Ադրբեջանի իշխանություն-

---

[14] Նույն տեղում, գ. 45, թ. 23:
[15] Նույն տեղում, թ. 26:
[16] Նույն տեղում, գ. 98, թ. 15:
[17] Նույն տեղում, գ. 45, թ. 36:
[18] Նույն տեղում, թ. 37:

ների միջև ձեռք բերված պայմանավորվածությունները չեն կատարվում: Սահմանային հատվածի ցանքատարածքներն օգտագործելուց հետո Ղազախի իշխանությունները պետք է ստիպեին ադրբեջանցիներին ազատել դրանք, սակայն այդ ուղղությամբ ոչ մի քայլ չի ձեռնարկվել: Դիլիջանի Հեղկոմի նախագահը խնդրում էր անհապաղ միջոցներ ձեռնարկել Բաքվի միջոցով Ղազախի իշխանությունների վրա ազդելու և հողերը ազատելու համար[19]: Սակայն Բաքուն, ամեն կերպ հերքելով հայկական կողմի փաստարկները, առաջ էր քաշում դեպքերի զարգացման սեփական տեսակետը: Այդ մասին է վկայում դեկտեմբերի 1-ի Հուսեյնովի հեռագիրը[20]:

Ինչպես վերը նշվեց, 1921 թ. ողջ ընթացքում սահմանային խնդիրները մնացին չլուծված: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման իրավիճակը պայթյունավտանգ էր և սպառնում էր Իջևան-Ղազախ սահմանահատվածում ազգամիջյան բախումների վերածման, 1922 թ. մարտի 22-ին ՀՍԽՀ Կենտգործկոմը դիմում է Ադրբեջանի Կենտգործկոմին առաջացած խնդիրները կարգավորելու համար խառը հանձնաժողով ձևավորելու առաջարկությամբ[21]: Սակայն Բաքվի իշխանությունները, հասկանալով, որ սահմանային վեճերի հետևանքով ավելի շատ տուժում է հայ ազգաբնակչությունը, քան ադրբեջանական, ամեն կերպ խուսափում էին պատասխանելուց: Ապրիլի 11-ին ՀՍԽՀ Կենտգործկոմը նորից է դիմում Ադրբեջանի Կենտգործկոմին՝ պահանջելով արագացնել պատասխանը[22]: Ի վերջո, Ադրբեջանի Կենտգործկոմը ապրիլի 15-ի նիստում քննարկեց հարցը և որոշեց. «Համաձայնվել ՀՍԽՀ Կենտգործկոմի առաջարկի հետ: ՀՍԽՀ և ԱՍԽՀ քաղաքացիների միջև եղած սահմանային վեճերը կարգավորելու համար ստեղծել 2 խառը հանձնաժողովներ՝ առաջինը Ղազախի շրջանի, իսկ երկրորդը՝ Ղարաբաղի շրջանի սահմանային խնդիրները լուծելու համար: Որպես առաջին հանձնաժողովի անդամներ ԱՍԽՀ Կենտգործկոմից ներկայացնել Մ. Ալիևին, Ի. Վեքիլովին և Ա. Աբասովին: Հանձնարարել Շուշիի շրջանային գործկոմին ներկայացնել ԱՍԽՀ Կենտգործկոմի հաստատմանը երկրորդ խառը հանձնաժողովի համար անդամներ: Վերը նշվածի մասին տեղեկացնել ՀԽՍՀ Կենտգործկոմին»[23]: Իր հերթին ՀՍԽՀ Կենտգործկոմը ապրիլի 26-ին տեղեկացրեց Բաքվի գործընկերներին, որ ՀՍԽՀ Կենտգործկոմի կողմից առաջին խառը հանձնաժողովի անդամներ է ներկայացնում Դովլաթովին և Աթաբեկովին: Երկրորդ խառը հանձնաժողովում ՀՍԽՀ Կենտգործկոմը ևս ներկայացնում էր Դովլաթովը, ինչպես նաև Թավաքալյանը[24]: Նույն օրվա ԱՍԽՀ Կենտգործկոմի նիստը որոշեց նաև հանձնարարել Կենտգործկոմի նախագահ Հաջինին ՀՍԽՀ Կենտգործկոմի նախագահի հետ անհապաղ համաձայնագիր ստորագրել ադրբեջանցի քոչվորների մուտքը Հայաստանի արոտավայրեր ապահովելու համար[25]:

---

[19] Նույն տեղում, գ. 98, թ. 86:
[20] Նույն տեղում, թ. 128:
[21] Նույն տեղում, Ֆ. 112, ց. 1, գ. 5, թ. 7:
[22] Նույն տեղում, թ. 28:
[23] Նույն տեղում, թ. 41:
[24] Նույն տեղում, թ. 47:
[25] Նույն տեղում, թ. 58:

Նշենք, որ վիճելի հարցերը քննարկվում էին ոչ միայն ՀՍԽՀ և ԱՍԽՀ կառավարման մարմիններում և խառը հանձնաժողովներում, այլ նաև միութենական՝ Անդրկովկասյան Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Դաշնային Միության օրգաններում: Ղազախի, Թովուզի և Իջևանի շրջաններում առկա սահմանային վեճերը կարգավորող խառը հանձնաժողովի զեկույցը քննարկվեց 1922 թ. մայիսի 29-ին Միութենական խորհրդի նախագահության նիստում[26]: Զեկուցողները հիմնական շեշտը դրել էին 3 կարևորագույն հարցերի վրա՝ ա) սահմանային հատվածում հայկական և ադրբեջանական գյուղերի հողային վիճելի հարցերը, բ) անտառի օգտագործման հարցը, գ) ադրբեջանցի քոչվորների հարցը:

Նիստը որոշեց հավանություն տալ հայկական և ադրբեջանական գյուղերի հողային հարցերը տեղում լուծելու որոշման նախագծին: Անտառի օգտագործման վիճելի հարցում կայացվեց ադրբեջանանպաստ որոշում. «Ակսիմբարայի կիրճի մոտակայքում գտնվող անտառային տնտեսությունը հանձնել Ղազախի իշխանությունների տնօրինությանը»[27]: Նման որոշման ընդունման հիմնական պատճառն այն էր, որ թե՛ Բաքվի և թե՛ Ղազախի ու Թովուզի իշխանությունները պնդում էին, որ Խորհրդային Ադրբեջանը, սահմանի այդ հատվածում զուրկ լինելով անտառից, փայտանյութի խիստ պահանջ ունի և անհրաժեշտ է հնարավորություն ընձեռել Ադրբեջանին օգտվելու Հայաստանի անտառներից: Փաստորեն, համաձայն Միութենական խորհրդի նախագահության նիստի որոշման՝ անտառի տարածքը ՀՍԽՀ ինքնիշխանության տիրույթում էր, սակայն Խորհրդային Ադրբեջանը ստանում էր անտառի օգտագործման «բացառիկ տնտեսական իրավունք»: Ինչ վերաբերում է քոչվորների հիմնախնդրին, ապա որոշվեց առաջարկել ՀՍԽՀ և ԱՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհուրդներին համապատասխանաբար Իջևանի, Ղազախի և Թովուզի գործկոմների միջոցով ստեղծել հանձնաժողով, որը կորոշեր 1923 թ. ադրբեջանցի քոչվորների համար նախատեսվող արոտավայրերի տեղը և այնտեղ հասնելու ուղիները, ինչպես նաև միասնական հարկ կսահմաներ ադրբեջանցի քոչվորների համար[28]:

Միութենական խորհրդի նիստի մայիսի 29-ի որոշումից դժգոհ մնալով՝ ՀՍԽՀ Կենտգործկոմը հունիսի 6-ին դիմեց ԱԽՍՀԴՄ խորհրդին՝ խնդրելով Հայաստանի և Ադրբեջանի սահմանային վեճերը քննարկելու համար ստեղծել նոր խառը հանձնաժողով, որի կազմում պետք է ընդգրկվեին Դոնենկոն (որպես Միութենական խորհրդի ներկայացուցիչ), Թեյմուր-Ալիևը (որպես ԱՍԽՀ ներկայացուցիչ) և Կարաբեքյանը (որպես ՀՍԽՀ ներկայացուցիչ)[29]: Իր հերթին ԱՍԽՀ Կենտգործկոմը նորից որդեգրեց «պատժամիջոցների քաղաքականությունը»: Կենտգործկոմի հուլիսի 15-ի նիստում որոշում կայացվեց անհապաղ հանձնարարել Ղազախի շրջանային գործկոմին՝ արգելել ԱՍԽՀ տարածքից Հայաստան հացամթերքի արտահանումը: Վերանայվեց նաև Ադրբեջանի Կենտգործկոմի մոտեցումը՝ կապված ադրբեջանցի քոչվորների հիմնահարցի հետ: Եթե նախկինում Բա-

---

[26] Նույն տեղում, ց. 2, գ. 3, թ. 133:
[27] Նույն տեղում:
[28] Նույն տեղում:
[29] Նույն տեղում, թ. 136:

քուն համաձայնվել էր հարցը տեղափոխել տեղի գործկոմների կողմից ներկայացվող անդամներ ունեցող խառը հանձնաժողովի իրավասությանը, որը պետք է աշխատեր ամեն տարի տեղանքը և հարկաչափը որոշելու սկզբունքներով, ապա այժմ Բաքվում հարցի լուծման միակ տարբերակը համարում էին ՀՍԽՀ-ից այդ տարածքների վարձակալումը:

Ուշագրավ է, որ ադրբեջանցի պաշտոնյաները պնդում էին, որ վարձակալված տարածքները համարվեն ադրբեջանական, իսկ ադրբեջանցի քոչվորների կյանքը կազմակերպելու համար այդ տարածքներում պետք է հաստատվեր ադրբեջանական տեղական իշխանություն[30]: Այս որոշումը չեղյալ հայտարարվեց միայն ԱԽՍՀ Կենտգործկոմի սեպտեմբերի 12-ի նիստում[31]: Սա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Միութենական Խորհուրդը որոշում էր կայացրել հայ-ադրբեջանական սահմանային վիճելի հարցերի լուծման համար ստեղծել նոր խառը հանձնաժողով: Պարզ է՝ Բաքվի պաշտոնյաների վրա ճնշում էր գործադրվել Մոսկվայից, հակառակ դեպքում Ադրբեջանի ղեկավարությունն իր նպատակներին հասնելու համար կշարունակեր դիվանագիտական բառապաշարում ընդունված «պրեսինգի քաղաքականությունը»:

Խնդիրները վերջնականապես լուծելու համար Միութենական խորհուրդը որոշում կայացրեց ստեղծել նոր խառը հանձնաժողով, որի կազմում էին Օրջոնիկիձեն, Մյասնիկյանը, Մուխտար-Հաջիևը, Ալիևը, Իբրահիմովը, Աթաբեկյանը, Թորոշելիձեն, Սուրխաթյանը, Կարաբեքյանը, Սկիբիտսկին և Միխայլովը[32]: 1922 թ. նոյեմբերի 6-ին հանձնաժողովը փորձեց վերջ դնել անտառի օգտագործման և ադրբեջանցի քոչվորների հարցերին, ինչպես նաև որոշումներ կայացվեցին սահմանային գյուղական համայնքների միջև եղած վեճերի լուծման հարցերով: Ըստ նոյեմբերի 6-ի նիստի արձանագրության՝ հայկական և ադրբեջանական գյուղերի միջև եղած հողային հարցերը լուծվեցին հօգուտ հայկական կողմի: Ակսիմբարայի կիրճի հարևանությամբ գտնվող անտառների օգտագործման հարցը կարելի է ասել նորից ադրբեջանանպաստ լուծում ստացավ: Հանձնաժողովն ընդունեց հետևյալ որոշումը. «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ակսիմբարայի կիրճին հարակից անտառներն օգտագործվում են հիմնականում Ադրբեջանի բնակիչների կողմից, իսկ Հայաստանը բավականաչափ անտառներ ունի օգտագործելու համար, և կյանքի կոչելու համար Միութենական խորհրդի մայիսի 29-ի նիստի որոշումը, Իջևան-Ղազախ սահմանահատվածում փոփոխության ենթարկել ՀՍԽՀ և ԱՍԽՀ միջև եղած վարչական սահմաններն այնպիսի կերպով, որ Ակսիմբարայի կիրճի շրջակայքի անտառը մտնի ԱՍԽՀ վարչական կազմի մեջ»[33]: Ինչ վերաբերում է ադրբեջանցի քոչվորներին, ապա նիստն ընդունեց հետևյալ որոշումը. «Տեղում ստեղծել հատուկ հանձնաժողով, որը կորոշի քոչվորների՝ լեռները բարձրանալու ժամկետները և ուղիները: Քոչվորների վճարելիք հարկերը չպետք է ավելի բարձր լինեն, քան նախապատերազմյան շրջանում: Քոչվորներից հարկերը պետք է հավաքվեն ադրբեջանական իշխա-

[30] Նույն տեղում:
[31] Նույն տեղում, ց. 1, գ. 37, թ. 238:
[32] Նույն տեղում, ց. 2, գ. 3, թ. 137:
[33] Նույն տեղում:

նությունների միջոցով և ԱՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդի միջոցով փոխանցվեն ՀՍԽՀ Ժողովրդական կոմիսարների խորհրդին»[34]: Փաստորեն, անտառի օգտագործման հարցում կայացվեց ավելի ադրբեջանանպաստ որոշում, քան նախկինում էր: ՀՍԽՀ Կենտգործկոմն այս անգամ ևս պահանջեց վերանայել նիստի որոշումը, սակայն ապարդյուն: Հայ-ադրբեջանական սահմանային խնդիրները շարունակվեցին քննարկվել միութենական տարբեր օրգաններում նաև հետագայում, սակայն այդպես էլ ընդունված որոշումները փոփոխության չենթարկվեցին: ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանային հատվածում առկա հայ-ադրբեջանական վեճերից բացի, նույնաբովանդակ վեճեր էին առկա նաև ՀՍԽՀ հարավարևելյան սահմանահատվածում, որոնց լուծման համար ևս տարբեր մակարդակներում հանձնաժողովներ էին ստեղծված:

Այսպիսով, պահպանված արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունը թույլ է տալիս պնդելու հետևյալը. 1. 1921-1922 թթ. ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում գոյություն ունեցած վեճերի հիմնական պատճառը ադրբեջանական ազգաբնակչության զինված լինելու հանգամանքն էր, հաճախակի զինված հարձակումները հայկական գյուղերի վրա և տեղի ադրբեջանական իրավապահ մարմինների անգործությունը: 2. 1921-1922 թթ. ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանահատվածի հայկական իշխանությունները, ինչպես նաև ՀՍԽՀ կառավարման մարմինները (Հեղկոմը, Կենտգործկոմը, ԺԿԽ-ն) ջանք չեն խնայել առկա խընդիրները շուտափույթ և բանակցային ճանապարհով լուծելու համար՝ ցանկանալով զերծ մնալ սահմանային հատվածում ազգամիջյան բախումներից և հայկական շրջաններում հացամթերքի բացակայության պայմաններում սովի տարածումից: 3. 1921-1922 թթ. ՀՍԽՀ հյուսիսարևելյան սահմանահատվածում ադրբեջանական իշխանությունները և ԱՍԽՀ կառավարման մարմինները չեն ցանկացել շուտափույթ լուծել առաջացա ծ խնդիրները՝ հաճախ նույնիսկ ստեղծված բարդ իրադրությանը մոտենալով «կանխամտածված անպատասխանատվությամբ»: Եթե հայկական կողմի գործելաոճում բացակայել է «տնտեսական պատժամիջոցների գործադրման քաղաքականությունը», ապա դա ադրբեջանական կողմի հիմնական գործելաոճն էր, որն իրագործվում էր սահմանային անցակետերի փակման եղանակով:

Չնայած ՀՍԽՀ Կենտգործկոմի բազմաթիվ բողոքներին՝ Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը հիմնականում հասավ իր նպատակին՝ Իջևան-Ղազախ սահմանահատվածում գտնվող Ակսիմբարայի կիրճի անտառի պատկանելության հարցը լուծելով հօգուտ Խորհրդային Ադրբեջանի՝ անտառի տարածքը Հայաստանից օտարելու եղանակով:

---

[34] Նույն տեղում:

АРМЯНО-АЗЕРБАЙДЖАНСКИЕ ПРИГРАНИЧНЫЕ ВОПРОСЫ НА СЕВЕРО-ВОСТОЧНОЙ ГРАНИЦЕ АРМ. ССР В 1921-1922 ГГ.

АКОПЯН М. Т.

Резюме

После установления советской власти в Азербайджане, а затем и в Армении, армяно-азербайджанские отношения в вопросе границ оставались напряженными. Кроме Карабахского, Нахичеванского и Зангезурского вопросов в 1921-1922 гг. в контексте армяно-азербайджанских отношений существовали также проблемы, связанные с водными ресурсами, пастбищными территориями и правом на пользование лесными массивами. Власти Советского Азербайджана делали все, чтобы решение спорных вопросов было затянуто и принято не в местных смешанных комиссиях с представителями Армении, Азербайджана и Союзного Совета Закавказской Федерации, а в высших инстанциях. На заседаниях президиума Союзного Совета Закавказской Федерации 29-ого мая и 6-ого ноября 1922 г. были приняты проазербайджанские решения, так как в северо-восточной части АССР имели место административно-территориальные изменения, в результате которых территории, покрытые богатым лесным массивом, были отторжены от АССР в пользу Советского Азербайджана. Документы, хранящиеся в Национальном архиве Армении, явствуют о том, что руководство Советского Азербайджана для достижения своих целей использовало политику экономического эмбарго.